**«Ջեյ-Փի փաստաբանական գրասենյակ» ՍՊԸ**

Երեբունի պլազա բիզնես կենտրոն,
Վ. Սարգսյան 26/1, ք. Երևան, ՀՀ
Հեռ: +374 60 610 011

## Մեր մասին

«Ջեյ-Փի փաստաբանական գրասենյակ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ «Ջեյ-Փի») առաջնակարգ փաստաբանական գրասենյակ է, որը ծառայություններ է մատուցում իր վստահորդներին սկսած 2018 թվականից: Այն հիմնադրվել է Փաստաբանների պալատի անդամ, իրավաբանական գիտությունների թեկնածու Արամ Վարդանյանի կողմից:

«Ջեյ-Փի» փաստաբանական գրասենյակի գործունեությունն առաջնայնորեն ուղղված է կորպորատիվ իրավունքի ոլորտում առկա խնդիրների վերհանմանն ու դրանց լուծումների հաղթահարմանը: Մենք առավելապես համագործակցում ենք տարբեր ոլորտներում գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց հետ, լուծելով էական և ընթացիկ խնդիրները, դրա շրջանակներում ձեռնարկելով օրենքով չարգելված բոլոր միջոցները՝ արտադատականից մինչ՝ դատական պաշտպանության ապահովմամբ: Մեր փորձառու մասնագետների թիմը մասնագիտացած է իրավունքի մի շարք այլ ոլորտներում ևս, ինչի շնորհիվ կարող է լուծել մեր հաճախորդների բազմազան իրավական խնդիրները՝ իրավունքի բոլոր ոլորտներում:

## Ինչու՞ միանալ հենց «Ջեյ-Փի» փաստաբանական գրասենյակին

- Մեզ համար ընդունելի է միայն լավագույնը: Ձեզ համար նույնպե՞ս: Ապա մեր տեսլականները համընկնում են:

- Մեր գործունեությունը կառուցված է հաղթանակների և հաջողությունների վրա, դա մեր աղբյուրն ու մոտիվացիան է, մեր կորպորատիվ մշակույթն է:

- Մեր մասնագիտական գործունեության ընթացքում ձեռք ենք բերել միջազգային մի շարք գործընկերների, որոնք սերտ համագործակցում են մեր մասնագետների հետ ի նպաստ մեր հաճախորդների:

- Մեր վստահորդները գործունեություն են ծավալում տարբեր բնագավառներում, ինչը բացառիկ հնարավորություն է ընձեռում non-stop մասնագիտական զարգացման և ինքնակրթման համար (staff continuous improvement policy): Մենք պայքարում ենք իրավունքների պաշտպանության համար, մենք պայքարում ենք իրավունքի գերակայության համար. Ոչ մի արդարացում

**«Ջեյ-Փի փաստաբանական գրասենյակ» ՍՊԸ**

Էրեբունի պլազա բիզնես կենտրոն,
Վ. Սարգսյան 26/1, ք. Երևան, ՀՀ
Հեռ: +374 60 610 011

պասիվության չի ընդունվում, մենք զուգահեռաբար ապահովում ենք մեր վստահորդների գործունեության իրավական անվտանգությունը:

- Ի վերջո. Մասնագետների անձնական PR և մրցունակ աշխատավարձ:

## Այսպիսով.

«Ջեյ-Փի» փաստաբանական գրասենյակը աշխատանքի է հրավիրում դատական պաշտպանության թիմում փաստաբանի հաստիքին, ինչպես իրավաբանական անձանց սպասարկման ապահովման թիմի կրթսեր և ավագ իրավաբանի հաստիքները զբաղեցնելու համար:

## Աշխատանքային պարտականություններ

- Պայմանագրերի մշակում, հուշագրերի և իրավական դիրքորոշումների պատրաստում,
- Հետազոտությունների և իրավական վերլուծությունների իրականացում,
- Դատական ամբողջական ներկայացուցչություն և պաշտպանության իրականացում, ինչպես նաև և վարչական մարմիններում, վարչարարության ընթացքում ներկայացչություն/մասնակցություն,
- Մասնակցություն «Ջեյ-Փի» փաստաբանական գրասենյակի տեղեկատվական առաջմղման մարտավարությանը և կրթական գործունեությանը:

## Անհրաժեշտ հմտություններ

- Բարձրագույն իրավաբանական կրթություն,
- Փաստաբանի արտոնագիր (ինչպես նաև հնարավոր է դիտարկել Փաստաբանական ակադեմիայում սովորող թեկնածուներին, որոնք նախատեսում են արտոնագիր ստանալ կես տարվա ընթացքում),
- Օտար լեզվի իմացություն (ռուսերեն, անգլերեն):

Ինքնակենսագրությունն ուղղարկել info@jplaw.am էլեկտրոնային հասցեին:

**Հարգանքով,**
**«Ջեյ-Փի» փաստաբանական գրասենյակ**